ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԱՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Ցարգարժան պրն. Ցարութիւնեան,

Գովարժան են Ձեր գործերն ու յանձնառութիւնները ազգային եւ եկեղեցական մեր կեանքում: Հաւատաւոր եւ ազգասէր հոգով Դուք սպասում էք Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմին՝ զօրավիգ լինելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանն ու մեր ժողովրդի հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Այսօր գոհունակ սրտով ենք անդրադառնում, որ նոյն նախանձախնդիր ոգով Դուք մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման ապտուածահաճոյ գործին, որը վկայութիւնն է մեր ժողովրդի հաւատքի ամրութեան, հոգեւոր արժէքների հանդէպ նախանձախնդրութեան:

Ուրախութիւն է Հայրապետիս համար տեսնել մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ որդիական անմնացորդ սէրն ու նուիրումը համայն հայութեան նուիրական օրրան Սուրբ Էջմիածնի հանդէպ, որով Դուք ազնիւ զօրակցութիւն էք բերում Մայր Աթոռիս պայծառութեանը: Փառք ենք մատուցում Ամենախնամ Բարձրեալին, որ հաւատաւոր Մեր զաւակները Հայրենիքում եւ Սփիւռքում եկեղեցանուէր նոր իրագործումներով սպասում են կանգնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու տիրաւանդ առաքելութեանը:

Բարձր գնահատելով ազգօգուտ ու եկեղեցանուէր Ձեր վաստակեալ գործունէութիւնը եւ սիրով ընդառաջ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ի Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ի Մ Ա Ի Ո Ր Ի Շ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք, որ Բարին Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով եկեղեցաշէն ու հայրենանուէր նորանոր իրագործումների: Թող Տիրոջ շնորհներն ու երկնառաք բարիքները անսպառ լինեն Ձեր կեանքից:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 782